յոց՝ պաշարեաց զարքայանիստ քաղաքն Անի յաւուրս ԽԷ. զոր էառ և կոտորեաց: Եւ Գագիկ փախեաւ ԳՃ. արամբք 'ի Կոստանդնուպօլիս առ կայսրն Յունաց: Եւ եղև անդ տրամաբանել Յունաց ընդ նմա, և յոյժ հռչակեցաւ իմաստութիւն նորա: Եւ յետ դարձին՝ 'ի հասանելն 'ի Կեսարիայ, զՄետրապօլիտն Յունաց Մարկոս սպան ընդ շան նորա արարեալ 'ի քրձի. որ զանուն շանն Արմէն էր եդեալ: Եւ 'ի Կեսարիայ յորսս և 'ի զբօսանըս լինելով, յաւուր միում իշխանք իւր ցրուեալ էին ընդ գաւառաւն, և Գագիկ յորսոյ խոնջեալ և արբեալ՝ քնէր ընդ ծառով միով մանկամբ իւրով. և Յոյնք 'ի փողոց դարանակալ եղեալ սպանին նմա. զոր անդ որսացեալ սպանին 'ի ՇԽԵ. թվին: Որով սպառեցաւ գաւազան իշխանութեան մերոյ 'ի ցեղէն Բագրատունեաց. որք իշխեցին յորդւոց յորդիս ամս Յ: Որ յայլ և այլ պատմութեանց ճշգրտեցաւ այսքան կարճառօտ:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան